

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ N 37/10**

ք.Երևան

29 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ «Տուրիզմ Պարբերական» ՍՊԸ դիմում-բողոքը՝

**ՊԱՐԶԵՑ**

**1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները**

«Տուրիզմ Պարբերական» ՍՊԸ (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից հայտարարություն էր ներկայացվել գործունեության ժամանակավոր դադարեցման մասին 2017 թվականի դեկտեմբերի 04-ից: 2018 թվականի ապրիլի 09-ից Ընկերությունը վերսկսել է գործունեությունը: ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ժամկետում Ընկերությունը հայտարարություն պետք է ներկայացներ շրջանառության հարկ վճարող համարվելու համար: Սակայն հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում Ընկերությունը սահմանված ժամկետում չի կարողացել գրանցել շրջանառության հարկ վճարող համարվելու մասին հայտարարությունը, քանի որ ծրագիրն այն չէր գրանցում: Առաջացած տեխնիկական խնդիրների մասին Ընկերությունը տեղեկացրել է սպասարկող հարկ վճարողների սպասարկման համապատասխան բաժնի աշխատակիցներին, սակայն ոչ մի կերպ չի ստացվել հայտարարությունը սահմանված ժամկետում գրանցել և հանձնել:

Սույն թվականի մայիսի 07-ին ստացվել է ՀՀ ՊԵԿ թիվ 3 բաժնի պետի պատասխանը, որի հիման վրա էլ դիմել է հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողով:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է հնարավորության դեպքում շտկել նշված տեխնիկական խնդիրը և պարզաբանում տալ Ընկերությանը 2018 թվականի ապրիլի 9-ից շրջանառության հարկ վճարող համարելը հնարավոր լինելու վերաբերյալ:

**2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

Ընկերությունը ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում պետական գրանցում ստացել է 25.01.1995թ. և զբաղվում է նեղ մասնագիտական գիտելիքների ձեռք բերման այլ դասընթացների կազմակերպման գործունեությամբ:

2017թ. ընթացքում Ընկերության իրացման շրջանառությունը կազմել է 120,000 ՀՀ դրամ:

Ընկերությունը ստեղծել է 2018թ. շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, օրենքով սահմանված ժամկետներում փորձել է

ուղարկել հայտարարությունը, սակայն այն փաստացի իրեն չի հաջողվել: Շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ երբևիցե չի ծանուցվել:

### **3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ**

«Հարկային օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգրք/ 254-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով հստակ սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Հանձնաժողովը հաստատված է համարում այն հանգամանքը, որ Ընկերությունը սահմանված կարգով և ժամկետներում փորձել է ներկայացնել է 2018թ. շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը (նիստի ժամանակ ներկայացվեցին նշված փաստը հիմնավորող ապացույցներ, որոնք կցվել են գործին), սակայն առաջացել են տեխնիկական խնդիրներ և փաստացի չի հաջողվել էլեկտրոնային եղանակով այն ուղարկել, որպիսի ծրագրային խափանումների մասին տեղեկացվել են նաև հարկ վճարողների սպասարկման համապատասխան բաժնի աշխատակիցները:

Օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շրջանառության հարկ վճարող կարող են համարվել այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը, որոնց նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 58.35 միլիոն ՀՀ դրամը:

Մինևույն ժամանակ, Օրենսգրքի 455-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգրքի 59-րդ և 254-րդ հոդվածներով սահմանված՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն ՀՀ դրամի շեմը, ինչպես նաև Օրենսգրքի 255-րդ հոդվածով սահմանված՝ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն ՀՀ դրամի շեմը գործում է 2019 թվականի հունվարի 1-ից, իսկ 2018 թվականի ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության ԱԱՀ-ի շեմը սահմանվում է 115 միլիոն ՀՀ դրամ:

Ընկերության 2017թ. ընթացքում 120,000 ՀՀ դրամ կազմած իրացման շրջանառությունը հաստատվում է ՊԵԿ տեղեկատվական բազայի տվյալներով:

Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասը հստակ սահմանում է հարկ վճարողի՝ շրջանառության հարկ վճարող չհամարվելու դեպքերը:

Տվյալ դեպքում, ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների շտեմարանում բացակայում է Ընկերությանն Օրենսգրքով նախատեսված՝ շրջանառության հարկ վճարող չհամարելու վերը նշված հոդվածով սահմանված դեպքերից որևէ մեկը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունն

Օրենսգրքով սահմանված ժամկետում փորձել է հարկային մարմին ներկայացնել հարկային մարմնի հաստատած ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, սակայն իրենից անկախ հանգամանքներում նշված հայտարարությունը չի ամրագրվել ՊԵԿ համակարգում, ինչպես նաև այն, որ հարկ վճարողների սպասարկման վարչության աշխատակիցները տեղեկացվել են և նրանց չի հաջողվել շտկել, վերացնել ծրագրային տեխնիկական խնդիրը (գործում առկա են համապատասխան ապացույցները), Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել Ընկերությանը կրկին ներկայացնել հայտարարություն՝ 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

#### 4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

#### ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «Տուրիզմ Պարբերական» ՍՊԸ դիմում-բողոքը բավարարել:
2. Ընկերության կողմից շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու դեպքում 2018թ. համարել շրջանառության հարկ վճարող:

Հանձնաժողովի նախագահ՝



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ